ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
ՀՀ Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գ. Աշոցք, Հրապարակ 1, Հեռ.
0245 2-14-82 , ashotsq.hamaynq@mail.ru

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՈՍԿԱՆՅԱՆԻՆ

N 894
26 հունիսի 2025թ.

Հարգելի՛ պարոն Ոսկանյան

Ի պատասխան Ձեր 2025 թվականի հունիսի 23-ի թիվ 17/12839-2025 գրության՝ Աշոցք համայնքի «Հողմաջուր» ջրամբարից 2025 թվականի հունիսի 17-ին վերցված ջրի նմուշի սանիտարամանրէաբանական ցուցանիշների վերաբերյալ տեղեկացնում ենք, որ հաշվի առնելով ոռոգեցիոն սեզոնը (մայիսից հոկտեմբեր ամիսները) և ջրային գործոնով պայմանավորված աղիքային հիվանդությունների այդ թվում բռնկումների կանխարգելման նպատակով հանձնարարական է տրվել Աշոցք համայնքի Լեռնագյուղ, Թորոսգյուղ, Արփենի, Գոգհովիտ բնակավայրերի վարչական ղեկավարներին իրականացնելու արտադրական հսկողություն և ձեռնարկելու համապատասխան միջոցներ ջրամբարի ջրի որակը ՀՀ առողջապահության նախարարի 2018 թվականի ապրիլի 5-ի հրամանով հաստատված սանիտարական կանոններին և նորմերին համապատասխանեցնելու համար:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ վերը նշված բնակավայրերի վարչական ղեկավարներին հանձնարարական է տրվել բացատրական աշխատանքներ տանել ազգաբնակչության հետ ջրամբարի և գետակի ափամերձ հատվածների տարածքներում անասուններին արածեցնելուց խուսափելու համար:

Հարգանքով՝ Կ. Մանուկյան

Կատ. Համայնքի ղեկավարի տեղակալ՝ Լ. Կոնդյան
+37477180866